**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2** /ПРОТОКОЛ №2/

**«ՊՎԾ-ԳՀԾՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**
**(Հայտերի բացում և գնահատում)**

Заседания оценочной комиссии по оценке закупочной процедуры под кодом "ՊՎԾ-ԳՀԾՁԲ-26/05"
(Открытие и оценка заявок)

**ք. Երևան,**
г. Ереван

**07-16.01.2026թ. / 15:00**
07-16.01.2026г. / 15:00

**Նիստը տեղի է ունեցել ՀՀ պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում:**

Заседание состоялось в здании Службы государственного надзора РА, в г. Ереван, Маштоца 47.

**Մասնակցում էին** / Приняли участие՝

**Հանձնաժողովի նախագահ** / Председатель комиссии՝ — **Ս. Գյուլինյան** / С. Гюлинян

**Հանձնաժողովի անդամներ**/ Члены комиссии — **Վ. Վարդանյան** / В. Варданян; **Մ. Ասրյան** / М. Асрян

**Քարտուղար** / Секретарь — **Ա. Ախոյան** / А. Ахоян

**Հանձնաժողովի անդամներ Ա. Մկրտչյանը և Ա. Գասպարյանը նիստին ներկա չէին:**

Члены комиссии А. Мкртчян и А. Гаспарян не присутствовали на заседании.

**Օրակարգ** / Повестка дня՝

**«ՊՎԾ-ԳՀԾՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացում և գնահատում**

Открытие и оценка заявок закупочной процедуры под кодом "ՊՎԾ-ԳՀԾՁԲ-26/05".

**1. Տեղեկություններ հրավերի հարցումների, հրավերում կատարված փոփոխությունների, ներկայացված հիմնավորումների և պատասխանների վերաբերյալ.**

Информация о запросах приглашения, внесенных в приглашение изменениях, представленных обоснованиях и ответах.

**1.1. Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հրավերում փոփոխություններ չեն կատարվել, ինչպես նաև հիմնավորումներ և պատասխաններ չեն եղել:**

Запросы по приглашению не поступали, в приглашение не вносились изменения, а также не было обоснований и ответов:

**2. Տվյալներ գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

Данные об участниках, подавших заявку на участие в процедуре закупки

| № | **Մասնակիցների անվանումներ** / Наименования участников | **Տվյալներ** / Данные |
|---|---|---|
| 1 | **«ԷՆԵՐՋԻ ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ** / ООО "ЭНЕРДЖИ ПРОВАЙДЕР" | **ք. Երևան, Ղափանցյան 3** / г. Ереван, Гапанцян 3<br>**info@energyprovider.am**<br>**+37455 12 34 57** |
| 2 | **«Էներջի Սփփլայ» ՍՊԸ** / ООО "Энерджи Спплай" | **ք. Երևան, Տերյան 69**/ г. Ереван, Терян 69<br>**info@e-supply.am**<br>**+374-15 80 09 00** |

**3. Տվյալներ մասնակիցների գնային առաջարկների վերաբերյալ.**

Данные о ценовых предложениях участников

**ՀՀ դրամ / Драмов РА**

| Զբաղեցրած տեղ / Занимаемое место | չ/հ н/л | Մասնակիցների անվանումներ / Наименования участников | Գնման գին / Цена закупки | Գնային առաջարկ / Ценовое предложение | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք / Стоимость | ԱԱՀ / НДС | Գին / Цена |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | «ԷՆԵՐՋԻ ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ / ООО "ЭНЕРДЖИ ПРОВАЙДЕР" | 8750000 | 6785000 | 1357000 | 8142000 |
| 2 | | «Էներջի Սփփլայ» ՍՊԸ / ООО "Энерджи Сплай" | | 6925000 | 1385000 | 8310000 |

**4. Տվյալներ մասնակիցներիի հայտերի մասին**

Данные о заявках участников,

**4.1. Տվյալներ՝ մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

Данные о наличии требуемых приглашением документов в заявках участников

**4.1.1Հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը ներկայացված են**

Все документы, установленные приглашением, представленные участником.

**4.2. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:**

**«Էներջի Սփփլայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ Հավելված N1-ում /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն/ ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները պարունակող կայքէջի հղմամբ ներկայացված տեղեկությունները հաստատված են եղել 27/02/2024 թվականին, ինչը նշանակում էր, որ «Էներջի Սփփլայ» ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 60.3-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները, մինչդեռ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:**

**Միաժամանակ, ներկայացված հայտում առկա լիազորագրի մեջ առկա էր վրիպակ, մասնավորապես որպես գնման ընթացակարգի ձև նշված էր բաց մրցույթը, այնինչ «ՊՎԾ-ԳՀԾՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպված է գնանշման հարցման ձևով:**

**Բացի այդ, բացակայում էր լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը:**

**Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 41-րդ կետը, որոշել էր կասեցնել հայտերի գնահատման նիստը և նրան առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որոնց վերաբերյալ գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ 14.01.2026թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկում չի ներկայացվել:**

В заявке, представленной ООО "Энерджи Сплай", были выявлены несоответствия. В частности, в Приложении №1 (заявление-объявление на участие в запросе котировок) сведения, представленные посредством ссылки на веб-страницу, содержащую информацию о бенефициарных владельцах, были подтверждены по состоянию на 27/02/2024 года, что свидетельствует о несоблюдении ООО "Энерджи Сплай" требований, установленных частью 5 статьи 60.3 Закона Республики Армения "О государственной регистрации юридических лиц, обособленных подразделений юридических лиц, учреждений и индивидуальных предпринимателей". Между тем участник, являющийся резидентом Республики Армения, при заполнении заявления-объявлении обязан указать ссылку на веб-страницу, содержащую сведения о своих бенефициарных владельцах, зарегистрированные в Агентстве государственного регистра юридических лиц в соответствии с указанным Законом.

Одновременно в представленной заявке в доверенности была допущена ошибка: в качестве формы закупочной процедуры был указан открытый конкурс, в то время как закупочная процедура под кодом "ՊՎԾ-ԳՀԾՁԲ-26/05" была организована в форме запроса котировок.

Кроме того, в заявке отсутствовала копия документа, удостоверяющего личность уполномоченного лица.

С учётом вышеизложенного оценочная комиссия, руководствуясь пунктом 41 Порядка, утверждённого подпунктом 1 пункта 1 Постановления Правительства Республики Армения от 4 мая 2017 года № 526-Ն, приняла решение приостановить заседание по оценке заявок и предложить участнику в течение одного рабочего дня устранить выявленные несоответствия, о чём секретарь оценочной комиссии 14.01.2026г.уведомил участника в электронном виде. Однако в установленный срок участником исправления не были представлены.

**5. Հիմք ընդունելով փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները,**

**Հանձնաժողովը որոշեց.**

Принимая за основу оценочные листы, представленные оценочной комиссией в результате оценки документов,

Комиссия решила:

**5.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 42-րդ կետը** *(այն է՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:),* **ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով** *(այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են)* **և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով** *(այն է՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում փոժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում)՝* **«Էներջի Սփփլայ» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան՝ անբավարար և մերժել:**

Руководствуясь пунктом 42 Порядка, утверждённого подпунктом 1 пункта 1 Постановления Правительства Республики Армения от 4 мая 2017 года № 526-Ն *(а именно: если в срок, установленный пунктом 41 настоящего Порядка, участник устраняет выявленное несоответствие, его заявка оценивается как соответствующая. В противном случае заявка данного участника оценивается как несоответствующая и отклоняется, в том числе в случае, если участник не представляет оригинал обеспечения заявки в срок, установленный подпунктом «е» части 1 пункта 32 настоящего Порядка, при этом победителем признаётся участник, занявший следующее место)*, а также руководствуясь частью 1 статьи 34 Закона Республики Армения "О закупках" *(а именно: заявки оцениваются в порядке, установленном приглашением. Соответствующими признаются заявки, отвечающие условиям, предусмотренным приглашением, в противном случае заявки признаются несоответствующими и отклоняются)* и подпунктом 19 пункта 32 Порядка, утверждённого подпунктом 1 пункта 1 Постановления Правительства Республики Армения от 4 мая 2017 года № 526-Ն *(а именно: если подтверждение участником наличия права на участие в закупках, предусмотренных приглашением, признаётся не соответствующим действительности, либо участник не представляет документы, предусмотренные приглашением, в порядке и сроки, установленные приглашением, включая случаи, когда в установленный срок он не устраняет либо устраняет не в полном объёме несоответствия, выявленные в результате оценки заявки, либо выбранный участник не представляет обеспечение квалификации или исполнения договора, либо лицо, заключившее договор*

*в целях его подписания, не заменяет представленное в форме ущерба обеспечение квалификации или исполнения договора, то данное обстоятельство считается нарушением обязательства, принятого в рамках процесса закупки)*, заявку ООО "Энерджи Спплай" признать не соответствующей требованиям приглашения, оценить как несоответствующую и отклонить.

**5.2. Գնման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից ճանաչել «ԷՆԵՐՋԻ ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍՊԸ-ին և պայմանագիր կնքելու նպատակով ծանուցել վերջինիս՝գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ժամկետում ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:**

В рамках процедуры закупки признать выбранным участником ООО "ЭНЕРДЖИ ПРОВАЙДЕР" и уведомить его в установленном законодательством о закупках порядке и сроке с целью заключения договора, представив предложение о заключении договора и проект договора.

**5.3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերությունը՝ նախաձեռնել գործընթաց «Էներջի Սփփլայ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:**

На основании абзаца «а» пункта 6 части 1 статьи 6 Закона "О закупках" инициировать процедуру включения ООО "Энерджи Спплай" в перечень участников, не имеющих права участвовать в закупочных процедурах.

**Ընդունվեց որոշում՝ կողմ - 3 դեմ -0:** / Принято решение: за – 3, против – 0:

**Հանձնաժողովի նախագահ՝**
Председатель комиссии ______________ **Ս. Գյուլինյան** / С. Гюлинян

**Հանձնաժողովի անդամներ՝**
Члены комиссии ______________ **Վ. Վարդանյան** / В. Варданян

______________ **Մ. Ասրյան** / М. Асрян

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Секретарь комиссии ______________ **Ա. Ախոյան** / А. Ахоян